ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№__307-Ա____ « 03 » փետրվարի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դայմոնդ Հաուզ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Արտակ Յուրիի Պետրոսյանի 2024 թվականի դեկտեմբերի 19-ի դիմումը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Երևանի քաղաքապետի կողմից 2016 թվականի ապրիլի 13-ին տրված N01/18-07/2-20593-195 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) տեքստում՝ «Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի՝ հարկերի ավելացման» բառերը փոխարինել «Բազմաբնակարան բնակելի շենքի և հարկերի ավելացման» բառերով:

2. Երևանի քաղաքապետի կողմից 2016 թվականի հունիսի 17-ին տրված N01/18-31022-550, 2017 թվականի ապրիլի 25-ին տրված N01/18-21788-281, 2024 թվականի մարտի 19-ին տրված N01/50-02-404-24 և սեպտեմբերի 11-ին տրված N01/50-02-1595-24 շինարարության թույլտվությունների տեքստերում՝ «Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի՝ հարկերի ավելացման» բառերը փոխարինել «Բազմաբնակարան բնակելի շենքի և հարկերի ավելացման» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական հատուկ ծրագրերի վարչության պետի վրա:

6.Սույն որոշման կատարման հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ